ՏՆԱՅԻՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ (IN-HOME SUPPORTIVE SERVICES) ԾՐԱԳԻՐ
ՆԱՀԱՆԳԱՅԻՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԵՐԱՆԱՅՄԱՆ ԽՆԴՐԱՆՔԻ ՊԱՏԱՍԽԱՆԻ ՆԱՄԱԿ ՍՏԱՑՈՂԻՆ՝ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՇԱԲԱԹՎԱ ԵՎ/ԿԱՄ ՃԱՄՓՈՐԴՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԸ ԳԵՐԱԶԱՆՑԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄԱՏԱԿԱՐԱՐՈՂԻ ԵՐՐՈՐԴ ԿԱՄ ՉՈՐՐՈՐԴ ԽԱԽՏՈՒՄԸ ՉԵՂԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ADDRESSEE)

ՎԱՐՉԱՇՐՋԱՆ՝ _____

Ծանուցման ամսաթիվը՝ _____
Մատակարարողի անունը՝ _____
IHSS գրասենյակի հասցեն՝ _____

IHSS գրասենյակի հեռախոսահամարը՝ _____

Ում՝ Տնային աջակցության ծառայությունների (IHSS) ստացողին

Այս ծանուցմամբ տեղեկացնում ենք ձեզ, որ _____ ամսում ձեր վերոնշյալ մատակարարողի ստացված խախտումը չեղարկվում է՝ սկսած այս ծանուցման ամսաթվից:

Այս խախտումը չեղարկվել է, քանի որ Կալիֆորնիայի Սոցիալական ծառայությունների բաժինը (California Department of Social Services, CDSS) որոշել է, որ, չնայած այն բանի, որ ձեր մատակարարողը խախտել է վարչաշրջանից ստացված SOC 2258-ում կամ SOC 2259-ում նշված կանոն(ներ)ը, այնուամենայնիվ, այն հանգամանքները, որոնք ստիպել են ձեր մատակարարողին լրացուցիչ ժամեր աշխատել, համապատասխանում են Բացառության չափանիշներին՝ ըստ CDSS-ի: Մեր վերանայման ընթացքում որոշվել է, որ նախկինում վարչաշրջանին ներկայացված Մատակարարողի՝ Վիճարկելու իրավունքի ձևաթղթում (SOC 2272) նշված հանգամանքները համապատասխանում են Բացառության չափանիշներին, ինչի հետևանքով էլ չեղարկվում է խախտումը:

Թեև այս խախտումը չեղարկվում է, հնարավոր է, որ ձեր մատակարարողն ավելի ուշ մեկ այլ խախտում ստանա, եթե նա չհետևի աշխատանքային շաբաթվա և ճամփորդության ժամանակի սահմանափակումներին, որոնք բացատրված են Մատակարարողի անդամագրման պայմանագրում (SOC 846):

Եթե հարցեր ունեք այս ծանուցման վերաբերյալ, կարող եք կապնվել ձեր վարչաշրջանի IHSS գրասենյակի հետ վերոնշյալ հեռախոսահամարով: